ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2014թ. գործունեության վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ, 2015թ.

Բովանդակություն

Հապավումներ 3

Նախաբան 4

1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական կարգավորումն ու զարգացումները 5

2. ՓԼ/ԱՖ ոլորտում իրականացված ուսումնասիրությունները և վերլուծությունները, դրանց արդյունքները 6

3. Ներպետական համագործակցություն 8

4. Միջազգային համագործակցություն 9

5. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտումները, կիրառված պատասխանատվության միջոցները 15

6. Ուսուցում, խորհրդատվություն և տեխնիկական օժանդակություն 16

Հավելվածներ 17

Հապավումներ

ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ՓԼ/ԱՖ	Փողերի լվացում եւ ահաբեկչության ֆինանսավորում
ՖԴԿ	Ֆինանսական դիտարկումների կենտրոն
ՖՀՄ	Ֆինանսական հետախուզության մարմին
ՖՎՎ	Ֆինանսական վերահսկողության վարչություն

Նախաբան

Սույն հաշվետվությամբ ներկայացվում են 2014թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում կատարված աշխատանքները և դրանց արդյունքները:

2014թ. աշխատանքներ են կատարվել ՖԱԹՖ-ի հանձնարարականներին համապատասխանող օրենսդրության ներդրման, միջազգային և ներպետական համագործակցության ամրապնդման, հաշվետվություն տրամադրող անձանց աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում գիտելիքների զարգացման, ՀՀ ԿԲ ՖԴԿ և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ներառված այլ մարմինների աշխատակիցների վերապատրաստման ուղղությամբ, որոնք միտված են եղել նաև Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2013-2015թթ. ազգային ռազմավարությամբ նախանշված նպատակների իրագործմանը:

Ի լրումն վերը նշվածի՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատում[1], ինչպես նաև աշխատանքներ են կատարվել Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման նախապատրաստման շրջանակներում[2]:

---

[1] Առավել մանրամասն տե՛ս հաշվետվության «Ներպետական համագործակցություն» վերտառությամբ 3-րդ գլխում:

[2] Առավել մանրամասն տե՛ս հաշվետվության «Միջազգային համագործակցություն» վերտառությամբ 4-րդ գլխում:

1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական կարգավորումն ու զարգացումները

2014թ. հունիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և հոկտեմբերի 28-ին ուժի մեջ է մտել ՖԴԿ կողմից այլ իրավասու մարմինների աջակցությամբ մշակված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում և 14 այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենսդրական փաթեթը:

2014թ. աշխատանքներ են կատարվել նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջներից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակման և ընդունման ուղղությամբ: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԿԲ խորհրդի կողմից ընդունվել են.

- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության նոր ձևերը, դրանց լրացման և հաշվետվության ներկայացման կարգերը հաստատելու մասին հոկտեմբերի 7-ի թիվ 261-Ն – 278-Ն որոշումները,
- «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը հաստատելու մասին» հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշումը,
- ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման կարգը» հաստատելու մասին» հոկտեմբերի 7-ի թիվ 280-Ն որոշումը,
- ««Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից հանելու խնդրանքի քննարկման, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու կարգը» հաստատելու մասին» դեկտեմբերի 2-ի թիվ 336-Ն որոշումը:

2014թ. ՀՀ ԿԲ նախագահի հունվարի 24-ի թիվ 1/41Ա և դեկտեմբերի 11-ի թիվ 1/1218Ա որոշումներով հաստատվել են «Խաղատների միջոցով փողերի լվացման», «Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների միջոցով ահաբեկչության ֆինանսավորումը» վերտառությամբ 13-րդ և 14-րդ տիպաբանությունները:

2. ՓԼ/ԱՖ ոլորտում իրականացված ուսումնասիրությունները և վերլուծությունները, դրանց արդյունքները

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում ՖԴԿ-ի կողմից ստացված ազդակների և կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների վերլուծության արդյունքներով իրականացվել են ինչպես կանխարգելիչ միջոցառումներ՝ ֆինանսական համակարգի մասնակիցներին համապատասխան զգուշացումների տեսքով, այնպես էլ տեղեկացումներ են ուղարկվել իրավապահ մարմիններին և օտարերկրյա ՖՀՄ-ներին: Ստացված և վերլուծված ազդակները եղել են բազմաբնույթ, որոնցում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանն առնչվող դեպքերը հիմնականում վերաբերել են տարատեսակ սխեմաներին, այդ թվում՝ կեղծ փաստաթղթային հիմքերի կիրառմամբ անօրինական միջոցների շրջանառության փորձերին, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ իրականացվող խարդախության, արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերի գողացված տվյալներով, զանգվածային մարքեթինգի մոդելով սխեմաներին: Ստացված ազդակները վերաբերել են նաև հնարավոր հարկային պարտավորություններից խուսափելու կամ ստվերային գործունեության հետ կապված ֆինանսական գործարքներին, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տիպաբանություններով նկարագրված սխեմաներին:

ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններին ուղարկված տեղեկացումների և հարցումների, ինչպես նաև իրավապահ մարմիններից ստացված հարցումների 2010-2014թթ. վիճակագրությունը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

	2010 թ.	*2011 թ.*	*2012 թ.*	*2013 թ.*	*2014թ.*	*Ընդամենը*
ՖԴԿ կողմից տեղեկացումներ իրավապահ մարմիններին	23	17	11	25	28	**104**
ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններից խնդրարկված տեղեկատվություն	15	33	11	17	17	**93**
Իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվություն	53	58	61	36	66	**274**

Օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության շրջանակներում 2014թ. ՖԴԿ կողմից օտարերկրյա ՖՀՄ-ներին կատարվել է թվով 36 հարցում, իսկ օտարերկրյա ՖՀՄ-ներից ստացվել է թվով 17 հարցում (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

	2010թ.	*2011թ.*	*2012թ.*	*2013թ.*	*2014թ.*	*Ընդամենը*
ՖԴԿ-ին ուղղված հարցումներ օտարերկրյա ՖՀՄ-ներից	25	36	11	32	17	**121**
ՖԴԿ կողմից կատարված հարցումներ օտարերկրյա ՖՀՄ-ներին	28	30	38	24	39	**159**

Ինչ վերաբերում է իրավապահ մարմինների կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու հատկանիշներով հարուցված քրեական գործերին, հարկ է նշել, որ 2014թ. հարուցվել է 9 քրեական գործ, որոնցում փողերի լվացմանը հիմնականում նախորդել են հետևյալ արարքները՝

- խարդախությունը
- կեղծ ձեռնարկատիրությունը
- փաստաթղթեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը
- համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունը,
- առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունների չարաշահումը:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար 2014թ. ընթացքում կայացվել է 1 մեղադրական դատավճիռ միայն փողերի լվացման հանցակազմով, որով դատապարտվել է 1 անձ: Դատավճիռը կայացվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ քարտային հաշիվներից կատարված հափշտակության արդյունքում ստացված գումարների օրինականացման համար առաջադրված մեղադրանքի հիման վրա:

Հարուցված քրեական գործերի, կայացված մեղադրական դատավճիռների, ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցված գործարքներում և գործարար հարաբերություններում ներգրավված միջոցների, ինչպես նաև փողերի լվացման մասով կայացված մեղադրական դատավճիռներով բռնագրավման ենթակա գումարը 2010-2014թթ. վիճակագրությունը ներկայացված է աղյուսակներ 3-ում և 4-ում:

Աղյուսակ 3

	2010թ.	*2011թ.*	*2012թ.*	*2013թ.*	*2014թ.*	*Ընդամենը*
Հարուցված քրեական գործեր	13	12	9	10	9	**53**
Կայացված մեղադրական դատավճիռներ	3	5	2	2	1	**13**

Աղյուսակ 4

	ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցված գործարքներում և գործարար հարաբերություններում ներգրավված միջոցներ	**Բռնագրավման ենթակա գումարներ (ՀՀ դրամ)[3]**
2010 թ.	345.000 ՀՀ դրամ, 290.000 ԱՄՆ դոլար	514.026.500 ՀՀ դրամ
2011 թ.	0	415.517.535 ՀՀ դրամ
2012 թ.	23.003.274 ՀՀ դրամ	12.220.947 ՀՀ դրամ
2013 թ.	54.893.971 ՀՀ դրամ	25.079.666 ՀՀ դրամ
2014 թ.	0	283.600 ՀՀ դրամ
Ընդամենը	78.242.245 ՀՀ դրամ, 290.000 ԱՄՆ դոլար	967.128.248 ՀՀ դրամ

3. Ներպետական համագործակցություն

ՓԼ/ԱՖ դեմ պայքարում խիստ կարևորվում է այդ ոլորտում ներգրավված ներպետական իրավասու մարմինների միջև արդյունավետ համագործակցությունը, որն էլ իրականացվել է հաշվետու ողջ ժամանակաշրջանի ընթացքում տարբեր հարթակներում:

Մասնավորապես, 2014թ. ընթացքում, ի թիվս այլ աշխատանքների, իրականացվել է նաև Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատում: Համաձայն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՖԱԹՖ-ի 40 հանձնարարականների նոր խմբագրության պահանջի՝ երկրները պետք է իրականացնեն երկրում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերի վերլուծություն՝ ապահովելու համար երկրում կիրառվող կանխարգելիչ

[3] Բացի աղյուսակում նշված՝ հօգուտ պետական բյուջեի բռնագանձման ենթակա միջոցներից, 2011թ. փողերի լվացան հիմքով կայացված դատավճիռների համաձայն, հօգուտ երրորդ անձի բավարարվել է ևս 83 535 019 ՀՀ դրամի բռնագանձման պահանջ:

միջոցների համապատասխանությունը ըստ ոլորտների խոցելիության: Ուստի, դեռևս 2013թ. սեպտեմբերին ՀՀ Նախագահի 21.03.02թ. թիվ ՆԿ-1075 կարգադրությամբ ստեղծված «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով) 28-րդ նիստում հաստատված ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման նոր ձեռնարկով նախատեսված ընթացակարգերի համաձայն՝ 2014թ. ՖԴԿ կողմից համապատասխան հարցաշարերն ուղարկվել են ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով: Ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա իրականացվել է ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատում, որն ամփոփվել է «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման հաշվետվություն» վերտառությամբ փաստաթղթում: Վերջինս քննարկվել և հավանության է արժանացել Միջգերատեսչական հանձնաժողովի 30-րդ նիստի ընթացքում: Հաշվետվության սեղմ տարբերակը, այն է՝ «Ներածություն» և «Հիմնական եզրահանգումներ» բաժինները հրապարակվել են ՖԴԿ ինտերնետային կայքէջում տեղադրելու միջոցով[4]:

2014թ. շարունակվել են ՖԴԿ և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված իրավասու մարմինների միջև անվտանգ կապուղիների միջոցով տեղեկատվության արագ փոխանակմանն ուղղված Միասնական տեղեկատվական տիրույթ համակարգի ներդրման աշխատանքները: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում գերատեսչությունների հետ քննարկումներ են ընթացել համակարգին միացման և շահագործման պայմանագրերի դրույթների և դրանց կնքման հետ կապված հարցերի վերաբերյալ: Բացի այդ, ՄՏՏ-ն նախագծող կազմակերպությունը ՀՀ ԿԲ հետ համատեղ իրականացրել է ՄՏՏ համակարգի մասնակից գերատեսչությունների աշխատակիցների ուսուցում:

Ներպետական համագործակցության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ կողմից իրականացվել են նաև ուսուցման մի շարք ծրագրեր, որոնք ներկայացված են սույն հաշվետվության 6-րդ գլխում:

4. Միջազգային համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ-ն շարունակել է միջազգային գործընկերների հետ արդեն իսկ ձևավորված հարաբերությունները՝ ներգրավվելով

[4] Առավել մանրամասն տե՛ս հետևյալ հղմամբ՝
https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/risk_assesment/2014_NRA_main_findings_arm.pdf

միջազգային փաստաթղթերի լրամշակման աշխատանքներում, ինչպես նաև այլ միջազգային նախաձեռնություններում:

Ձեռնարկվել են գործողություններ, որոնք ուղղված են եղել միջազգային կառույցների կողմից կիրառվող սահմանափակումների վերաբերյալ պահանջների կատարմանը: Այսպես, ՖԴԿ ինտերնետային կայքում հրապարակվել և հաշվետու անձինք իրազեկվել են.

- ՄԱԿ-ի անվտանգության Խորհրդի (ԱԽ) 1988 և 1267/1989 բանաձևերի՝ Ալ-Քաիդայի և Թալիբանի հետ կապված անձանց ցանկերում թարմացումների վերաբերյալ,
- ՖԱԹՖ-ի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ռազմավարական բացեր ունեցող երկրների, ինչպես նաև այն երկրների վերաբերյալ, որոնք ՖԱԹՖ-ի ՓԼ/ԱՖ չափանիշներին համապատասխանության ընթացիկ դիտանցման շրջանակներում որակվել են որպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ռազմավարական բացեր ունեցող, և դրանք վերացնելու նպատակով ՖԱԹՖ-ի հետ համատեղ մշակել են գործողությունների ծրագիր:

Կատարված փոփոխությունները և լրացումներն արտացոլվել են նաև ՖԴԿ տեղեկատվական շտեմարանում:

Ֆինանսական հետախուզության մարմինների միջազգային կառույցի՝ Էգմոնտ խմբի գործունեության շրջանակներում

ՖԴԿ-ն շարունակել է Էգմոնտ խմբի անվտանգ տեղեկատվական ցանցի միջոցով տեղեկատվություն փոխանակել օտարերկրյա ՖՀՄ-ների հետ:

2014թ. ՖԴԿ պատվիրակությունը Հունգարիայի Բուդապեշտ և Պերուի Լիմա քաղաքներում մասնակցել է Էգմոնտ խմբի աշխատանքային խմբերի և լիագումար նիստերին:

Օպերացիոնալ հարցերով աշխատանքային խմբում ներկայացվել են ՖԴԿ կողմից նախաձեռնված և ղեկավարվող՝ Էգմոնտ խմբի անդամ հանդիսացող ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրի առաջընթացի երրորդ և համալիր հաշվետվությունները և Էգմոնտ խմբի անդամ ՖՀՄ-ների գործառույթների և տեղեկատվության փոխանակման ընթացակարգում առաջարկվող փոփոխությունների նախագիծը:

Ընդլայնման գծով և իրավական հարցերով աշխատանքային խմբերում ներկայացվել է ՖԴԿ կողմից հովանավորվող Թուրքմենստանի ՖՀՄ-ի՝ տեղում համակարգի գնահատման հաշվետվությունը: Ընդլայնման գծով աշխատանքային խմբում ներկայացվել է նաև ՖԴԿ կողմից հովանավորվող Իրանի Իսլամական Հանրապետության ՖՀՄ-ի՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրած աշխատանքների մասին տեղեկատվություն:

Էգմոնտ խմբի կողմից կազմակերպված «Ազգային ռիսկի գնահատում» խորագրով սեմինարի շրջանակում ՖԴԿ կողմից ներկայացվել է «Ազգային ռիսկի հաշվետվությունը և միջոցառումների ծրագիրը» թեման:

ՖԴԿ-ն մասնակցել է Էգմոնտ խմբի անդամների միջև երկամյա պարբերականությամբ անցկացվող հարցման հարցաշարի վերանայման աշխատանքներին:

2014թ. ՖԴԿ պատվիրակությունը մասնակցել է նաև Էգմոնտ խմբի կոմիտեի նիստին, որի ժամանակ ներկայացվել և քննարկվել է Էգմոնտ խմբի անդամ ՖՀՄ-ների գործառույթների և տեղեկատվության փոխանակման ընթացակարգում առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև Էգմոնտ խմբի անդամ ՖՀՄ-ների աջակցության և համապատասխանության ընթացակարգում առաջարկվող փոփոխությունների և լրացումների նախագծերը: Վերջինս հավանության է արժանացել և հաստատվել Էգմոնտ խմբի ՖՀՄ-ների ղեկավարների կողմից:

Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի հետ համագործակցության շրջանակներում

ՖԴԿ ներկայացուցիչները ՀՀ պատվիրակության կազմում մասնակցել են ՄԱՆԻՎԱԼ-ի 44-ից 46-րդ հերթական լիագումար նիստերին:

Նիստերի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

- Երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատումների ժամանակացույցը,
- Երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 5-րդ փուլի գնահատման ընթացակարգի կանոնները և տիպային հարցաշարերը,
- Մակեդոնիայի, Լիխտենշտեյնի, Ռումինիայի, Էստոնիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 4-րդ փուլի գնահատման հաշվետվությունները,
- Լիտվայի, Բոսնիայի և Հերցեգովինայի համապատասխանության ընդլայնման ընթացակարգերի վերաբերյալ հաշվետվությունները,
- Ռուսաստանի Դաշնության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման առաջընթացի հաշվետվությունը,
- ՄԱՆԻՎԱԼ-ի անդամ մի շարք երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 4-րդ փուլի գնահատման առաջընթացի հաշվետվությունները և այլն:

Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի լիագումար նիստերի ընթացքում ՖԴԿ աշխատակիցները հանդես են եկել որպես Ռումինիայի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 4-րդ փուլի գնահատման ֆինանսական ոլորտի գնահատող, և որպես Լիխտենշտեյնի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գնահատման հաշվետվության վերանայող խումբ:

Նիստերի ընթացքում որոշվել է, որ Հայաստանի Հանրապետությունը 5-րդ փուլի գնահատում է անցնելու 2015թ. մայիս-հունիս ամիսներին՝ հանդես գալով որպես վերանայված հանձնարարականներով գնահատվող առաջին երկիր: Եվրախորհրդի

ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման շրջանակներում գնահատողների այցը տեղի կունենա 2015 թ. մայիսի 25-ին:

Մինչ այդ, գնահատման նախապատրաստման հետ կապված՝ 2014 թ. հունիսի 11-ից 13-ը Հայաստանի Հանրապետություն են այցելել Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի գլխավոր քարտուղարը և քարտուղարության ներկայացուցիչը, ովքեր կազմակերպված սեմինարի շրջանակներում ներկայացրել են ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման գործընթացը: ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի անդամները հանդիպել են նաև Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին և վերջինիս կից գործող աշխատանքային խմբի անդամներին:

Գնահատման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում գնահատման ընթացակարգերին համապատասխան 2014թ. ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին են ներկայացվել տեխնիկական համապատասխանության և արդյունավետության գնահատման հարցաշարերը՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու և ամփոփելու նպատակով: Տեխնիկական համապատասխանության հարցաշարը ՖԴԿ կողմից ամփոփվել և Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբին է ներկայացվել դեկտեմբերի 15-ին: Ինչ վերաբերում է արդյունավետության գնահատման հարցաշարին, վերջինիս ամփոփ տարբերակը Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբին է ներկայացվելու մինչև 2015թ. հունվարի 15-ը:

ՀՀ առաջարկով որոշվել է Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից 2015թ. մարտի 9-ից 13-ը նախատեսվող ՖԱԹՖ-ի նոր հանձնարարականների հիման վրա երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատողների դասընթացը անցկացնել ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում:

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ-ն կազմակերպել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար» խորագրով դասընթաց ՀՀ իրավապահ մարմինների և դատական համակարգի ներկայացուցիչների համար: Դասընթացը անց է կացվել Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի նախագահի տեղակալի և իրավապահ հարցերով գիտնական-փորձագետի կողմից:

Վարշավայի կոնվենցիայով նախատեսված Կողմերի համաժողով

Սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը ՖԴԿ ներկայացուցիչը մասնակցել է Ստրասբուրգում կայացած «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Վարշավայի կոնվենցիա) համաձայն հիմնադրված Կողմերի համաժողովի 6-րդ նիստին, որի ընթացքում հաստատվել են մի շարք երկրների գնահատման հաշվետվությունները, ինչպես նաև կոնվենցիային համապատասխանության առաջիկա գնահատումների, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության գնահատման ժամանակացույցը:

Եվրասիական խմբի գործունեության շրջանակներում

ՀՀ-ն, որպես դիտորդ-անդամ՝ ի դեմս ՖԴԿ-ի, շարունակել է ակտիվորեն մասնակցել Եվրասիական խմբի նախաձեռնություններին:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել Եվրասիական խմբի 20-րդ և 21-րդ լիագումար նիստերը, որոնց մասնակցել է նաև ՀՀ պատվիրակությունը:

Նիստերի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

- Երկրների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 2-րդ փուլի գնահատումների ժամանակացույցը, ընթացակարգը և տիպային աշխատանքային ծրագիրը,
- Բելառուսի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի փոխադարձ գնահատման առաջընթացի հաշվետվությունները,
- Եվրասիական խմբի դիտորդ-անդամների ընդլայնման և մի շարք երկրների և միջազգային կազմակերպությունների անդամակցության և այլ հարցեր:

Եվրասիական խմբի լիագումար նիստի շրջանակներում կազմակերպվել է նաև Միջազգային գիտագործնական համաժողով, որի շրջանակներում հանդես է եկել նաև ՖԴԿ ղեկավարը:

ԱՊՀ անդամ երկրների ֆինանսական հետախուզության մարմինների ղեկավարների խորհրդի շրջանակներում

ՖԴԿ ներկայացուցիչները մասնակցել են ԱՊՀ մասնակից պետությունների ՖՀՄ-ների ղեկավարների խորհրդի (ՖՀՄՂԽ) 3-րդ և 4-րդ նիստերին, ինչպես նաև կից գործող աշխատանքային խմբերի հանդիպումներին:

Նիստերի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական հարցերը.

- ՖՀՄՂԽ գործունեության հայեցակարգը և անդամ ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծման հարցերը,
- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության հայեցակարգը,
- ԱՊՀ տարածքում ՓԼ/ԱՖ հակազդելուն ուղղված միջոցառումների իրականացման ծրագրի նախագիծը,
- ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծման հիմնախնդիրը և այլ հարցեր:

Նիստերի ընթացքում ամփոփվել է ԱՊՀ անդամ պետությունների ՖՀՄ-ների համագործակցության հայեցակարգի նախագիծը, որի վերաբերյալ ՖԴԿ կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկություններն ամբողջությամբ հավանության են արժանացել:

Մայիսի 20-ից 21-ին կայացած աշխատանքային խմբերի հանդիպումները անց են կացվել ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում, որին մասնակցել են փորձագետներ Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Ռուսաստանի ՖՀՄ-ներից, ինչպես նաև ԱՊՀ մասնակից երկրների ՖՀՄ-ների

ղեկավարների խորհրդի գործադիր կոմիտեի ներկայացուցչները: Հանդիպման շրջանակներում կազմակերպվել է «ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատում» և «ՖԱԹՖ նոր հանձնարարականների իմպլեմենտացումը ազգային օրենսդրության մեջ՝ արդի խնդիրներ» թեմաներով դասընթաց: Դասախոսությամբ հանդես է եկել նաև ՖԱԹՖ նախագահը:

ԱՄՀ տեխնիկական օժանդակության շրջանակներում

Ապրիլի 14-ից 17-ը տեխնիկական օժանդակության ծրագրի ամփոփման նպատակով ՀՀ է այցելել ԱՄՀ փորձագետների խումբը: Այցի ընթացքում փորձագետները հանդիպել են ՀՀ ֆինանսների նախարարության և ՖԴԿ ներկայացուցիչների հետ:

Տեխնիկական օժանդակության ծրագրի ամփոփիչ փուլը ներառել է հետևյալ ուղղությունները.

- Ոչ ֆինանսական հաստատությունների գործունեության ոլորտում ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատման արդյունքների քննարկում և ամփոփում,
- Խաղատների նկատմամբ ՓԼ/ԱՖ տեսանկյունից վերահսկողության առանձնահատկությունների քննարկում:

Տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում ԱՄՀ կողմից մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարությանն է տրամադրվել խաղատների նկատմամբ տեղերում և հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկ:

Օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններին տրամադրվող տեխնիկական օժանդակություն

ԻԻՀ ՖՀՄ-ին տրամադրվող տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում Իրանի ՖՀՄ-ի և կենտրոնական բանկի ներկայացուցիչները այցելություն են կատարել Երևան: Այցելության ընթացքում ներկայացվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին և Էգմոնտ խմբին անդամակցության ընթացակարգերին առնչվող հարցեր: ԻԻՀ կողմից ներկայացվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում արձանագրված զարգացումները:

2014թ. դեկտեմբերի 15-ից 16-ը Թեհրան քաղաքում կայացել է Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 12-րդ նիստը, որի շրջանակներում քննարկվել են բանկային և ֆինանսական ոլորտում համագործակցության զարգացմանն ուղղված հիմնահարցեր, կայացել են հանդիպումներ ԻԻՀ ՖՀՄ-ի աշխատակիցների հետ: Նիստի ավարտին կնքվել է փոխըմբռնման հուշագիր, որով ՖԴԿ-ն վերահաստատել է իր պատրաստակամությունը շարունակելու աջակցությունը ԻԻՀ ՖՀՄ-ին՝ Էգմոնտ խմբին անդամակցության հարցում:

ՖԴԿ և օտարերկրյա ՖՀՄ-ների միջև կնքված փոխըմբռնման համաձայնագրեր

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ կողմից փոխըմբռնման հուշագիր է կնքվել Լիխտենշտեյնի և Ղրղզստանի ՖՀՄ-ների հետ: ՖԴԿ նաև վերակնքել է նախկինում ստորագրված փոխըմբռնման հուշագիրը Միացյալ Թագավորության վերակազմավորված ՖՀՄ-ի հետ: Էգմոնտ խմբի կողմից վերանայված տարբերակով հուշագրի կնքման վերաբերյալ բանակցություններ են ընթանում Ռուսաստանի ՖՀՄ-ի հետ: 2014 թվականի դրությամբ ՖԴԿ կողմից կնքվել են փոխըմբռնման հուշագրեր թվով 30 երկրների ՖՀՄ-ների հետ[5]:

5. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության խախտումները, կիրառված պատասխանատվության միջոցները

2014թ. ընթացքում հաշվետվություն տրամադրող անձ հանդիսացող ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատություններում իրականացված ստուգումների արդյունքներով բացահայտվել են մի շարք խախտումներ, և կիրառվել են համապատասխան պատասխանատվության միջոցներ:

Ֆինանսական հաստատությունների կողմից օրենսդրության խախտումները հիմնականում վերաբերել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում կանխարգելիչ միջոցառումների ոչ պատշաճ իրականացմանը, մասնավորապես՝ հաճախորդների պատշաճ ուսումնասիրությանը, ներքին դիտարկումների մարմնի գործառույթներին, ներքին իրավական ակտերին վերաբերող պահանջներին: Կիրառված պատասխանատվության միջոցները՝ ըստ ֆինանսական հաստատությունների տեսակների, ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

2014թ. ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները	
Բանկեր	7 բանկի կողմից թույլ է տրվել թվով 28 խախտում, որոնց դեպքում՝ • թվով 18 խախտման համար կիրառվել են նախազգուշացումներ, • թվով 4 խախտման դեպքում՝ տուգանք՝ ընդհանուր 100.000 ՀՀ դրամի չափով, • թվով 6 խախտման համար կիրառվել են և նախազգուշացումներ և տուգանք՝ ընդհանուր 1.100.000 ՀՀ դրամի չափով
Վարկային կազմակերպություններ	6 ընկերության կողմից թույլ է տրվել 18 խախտում, որոնց բոլորի դեպքում կիրառվել է տուգանք՝ ընդհանուր 300.000 ՀՀ դրամի չափով
Ապահովագրական ընկերություններ	2 ընկերության կողմից թույլ տրված թվով 6 խախտման դեպքում կիրառվել են նախազգուշացումներ
Վճարահաշվարկային	Մեկ ընկերության կողմից թույլ տրված թվով 4 խախտման համար կիրառվել են և նախազգուշացումներ և տուգանք՝ ընդհանուր

[5] Տե՛ս Հավելված 2:

կազմակերպություններ	250.000 ՀՀ դրամի չափով
Ներդրումային ընկերություններ	Մեկ ընկերության կողմից թույլ տրված թվով 2 խախտման համար կիրառվել են նախազգուշացումներ
Փոխանակման կետեր	6 ընկերության կողմից թույլ է տրվել թվով 6 խախտում, որոնց դեպքում՝ • թվով 4 խախտման համար կիրառվել են նախազգուշացումներ, • թվով 2 խախտման դեպքում կիրառվել է տուգանք ընդհանուր 4.000.000 ՀՀ դրամի չափով

Ինչ վերաբերում է ոչ ֆինանսական հաստատություններին, հաշվետու ժամանակահատվածում պատասխանատվության միջոց է կիրառվել միայն շահումով խաղ կազմակերպող 1 անձի նկատմամբ: Վերջինիս նկատմամբ կիրառվել է 800.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված ներքին դիտարկումների ստորաբաժանում կամ աշխատակից ունենալու պահանջը խախտելու համար:

ՖԴԿ աշխատակիցները մասնակցել են ֆինանսական կազմակերպություններում իրականացված ստուգումներին՝ օժանդակելով ֆինանսական կազմակերպությունների ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին համակարգի դիտանցման աշխատանքներին:

6. Ուսուցում, խորհրդատվություն և տեխնիկական օժանդակություն

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ներգրավված իրավասու կառույցների, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձանց աշխատակիցների գիտելիքների խորացման և կարողությունների զարգացման նպատակով 2014թ. ընթացքում կազմակերպվել են մի շարք ուսուցողական ծրագրեր և հանդիպումներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 3-ի և Հավելված 4-ի ներքո:

Հավելվածներ

Հավելված 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԻՆՔ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված	*2014թ-ի ընթացքում հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՖԴԿ-ին ներկայացված հաշվետվություններ*	
		պարտադիր տեղեկացման	*կասկածելի*
Ֆինանսական հաստատություններ			
բանկեր	22	213662	209
վարկային կազմակերպություններ	33	492	1
արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք	203	-	-
արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք	1	15	-
դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձինք	6	-	-
ներդրումային ընկերություններ («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք)	8	616	-
«Արժեթղթերի շուկայի մասի» ՀՀ օրենքի համաձայն՝ կարգավորվող շուկայի արժեթղթերի կենտրոնացված պահառուն	1	41	-
ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերություններ	8	808	-
ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք	2	-	-
գրավատներ	132	24	-
Ոչ ֆինանսական հաստատություններ			
ռիելտորական գործունեություն	213	-	-

իրականացնող անձինք			
նոտարներ	103	808	-
փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք	1461	-	-
անհատ ձեռնարկատեր հաշվապահներ և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք	8	-	-
անհատ ձեռնարկատեր աուդիտորներ և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք	36	-	-
թանկարժեք մետաղների դիլերներ	-	-	-
թանկարժեք քարերի դիլերներ	21	-	-
արվեստի գործերի դիլերներ	-	-	-
սակարկությունների կազմակերպիչներ	-	-	-
շահումով խաղ և խաղատներ,	10	16	-
վիճակախաղ կազմակերպող անձինք	4	-	-
ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք	4	-	-
հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք	-	-	-
վարկային բյուրոներ	-	-	-
անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմին (հաշվառված ռեգիստրներ)	146	920	-
իրավաբանական անձանց գրանցող պետական մարմին (պետական ռեգիստր)	1	2	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**2423**	**217404**	**210**

Հավելված 2

ՖԴԿ-ի և օտարերկրյա ՖՀՄ-ների միջև կնքված փոխըմբռնման հուշագրեր

ԵՐԿԻՐ	ՖՀՄ ԱՆՎԱՆՈՒՄԸ
Ավստրալիա	Ավստրալիայի գործարքների հաշվետվությունների և վերլուծության կենտրոն
Արաբական Միացյալ Էմիրություններ	Փողերի լվացման դեմ պայքարի և կասկածելի գործարքների մարմին
Բելառուս	Ֆինանսական դիտարկումների վարչություն
Բերմուդա	Ֆինանսական հետախուզության գործակալություն
Թաիլանդ	Փողերի լվացման դեմ պայքարի գրասենյակ
Իսրայել	Իսրայելի փողերի լվացման կանխարգելման մարմին
Իրանի Իսլամական Հանրապետություն	Ֆինանսական հետախուզության մարմին
Լեհաստան	Ֆինանսական տեղեկատվության գլխավոր վերահսկող
Խորվաթիա	Փողերի լվացման դեմ պայքարի գրասենյակ
Կանադա	Կանադայի գործարքների և հաշվետվությունների վերլուծության կենտրոն
Կիպրոս	Փողերի լվացման դեմ պայքարի մարմին
Հարավային Աֆրիկայի Հանրապետություն	Ֆինանսական հետախուզության կենտրոն
Ճապոնիա	Ճապոնիայի ֆինանսական հետախուզության կենտրոն
Մակեդոնիա	Փողերի լվացման կանխարգելման տնօրինություն
Միացյալ Թագավորություն	Հանցավորության դեմ պայքարի ազգային կենտրոն
Մոլդովա	Փողերի լվացման կանխարգելման և վերահսկողության գրասենյակ
Մոնտենեգրո	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ադմինիստրացիա
Չինաստան	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և վերլուծության կենտրոն
Չինաստանի Հանրապետություն (Թայվան)	Արդարադատության նախարարության հետախուզման բյուրոյի փողերի լվացման դեմ

	պայքարի բաժին
Պանամա	Պանամայի ֆինանսական վերլուծության մարմին
Ռումինիա	Փողերի լվացման կանխարգելման և հսկողության ազգային գրասենյակ
Ռուսաստան	Ֆինանսական դիտարկումների ծառայություն
Սան Մարինո	Ֆինանսական հետախուզության գործակալություն
Սաուդյան Արաբիա	Ֆինանսական հետախուզության մարմին
Սերբիա	Հանրապետության փողերի լվացման կանխարգելման ադմինիստրացիա
Վրաստան	Վրաստանի ֆինանսական դիտարկումների ծառայություն
Տաջիկստան	Ֆինանսական դիտարկումների դեպարտամենտ
Ուկրաինա	Ուկրաինայի ֆինանսական դիտարկումների պետական կոմիտե
Ղրղզստան	Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆինանսական հետախուզության պետական ծառայություն
Լիխտենշտեյն	Ֆինանսական հետախուզության մարմին

Հավելված 3

Ուսուցում ՖԴԿ, ՀՀ ԿԲ այլ ստորաբաժանումների և ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ներգրավված պետական մարմինների աշխատակիցների համար

ԹԵՄԱ	ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ	ԱՄՍԱԹԻՎ
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերաբերյալ գիտելիքների խորացման և կարողությունների զարգացման նպատակով դասընթաց	ՖԴԿ, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացուցիչներ, դատավորներ	հունվարի 20-ից 21
Ռումինիայի ՖՀՄ-ի՝ փողերի լվացման կանխարգելման և կարգավորման ազգային գրասենյակի կողմից կազմակերպված ՀԵՄՈԼԻԱ համաժողով	ՖԴԿ աշխատակից	փետրվարի 10-ից 11
«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ընդհանուր նկարագիրը» թեմայով դասընթաց	ՖԴԿ, ՀՀ ԿԲ այլ ստորաբաժանումների աշխատակիցներ	մարտի 10
«Միասնական տնտեսական տիրույթի երկրների ֆինանսական շուկաների ինտեգրման ռազմավարությունը և տակտիկան» թեմայով համաժողով	ՖԴԿ աշխատակից	մարտի 20
«Օտարերկրյա հարկային հաշիվների համապատասխանության մասին ակտը (ՖԱՏԿԱ). համապատասխանության պարտավորություններ հայաստանյան բանկերի և ֆինանսական հաստատությունների համար» թեմայով սեմինար	ՖԴԿ աշխատակիցներ	ապրիլի 25-ից 26
ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից կազմակերպված «Դատախազների տեսակետը հանցավոր գործունեության արդյունքում ստացված եկամուտների օրինականացման վերաբերյալ» թեմայով քննարկում	ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչ	մայիսի 12-ից 13
5-րդ փուլի գնահատման ընթացակարգերի վերաբերյալ իրազեկվածության	Դատական, իրավապահ և վերահսկող մարմիններ,	հունիսի 12-ից 13

բարձրացման նպատակով Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի փորձագետների կողմից կազմակերպված սեմինար-քննարկումներ	հաշվետվություն տրամադրող անձինք	
Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային վերանայված հանձնարարականների կիրարկում» թեմայով դասընթաց	ՖԴԿ աշխատակից	օգոստոսի 4-ից 8
ՄԱՆԻՎԱԼ-ի և Էգմոնտ խմբի կողմից համատեղ կազմակերպված ռազմավարական վերլուծություն թեմայով դասընթաց	ՖԴԿ աշխատակից	օգոստոսի 25-ից 29
ՄԱՆԻՎԱԼ-ի գնահատողների դասընթաց	ՖԴԿ աշխատակիցներ	նոյեմբերի 3-ից 7

Հավելված 4

Ուսուցողական ծրագրեր և հանդիպումներ հաշվետվություն տրամադրող անձանց և նրանց վերահսկող մարմինների համար

ԹԵՄԱ	ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ	ԱՄՍԱԹԻՎ
«Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամի կողմից կազմակերպված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելումը ֆինանսական հաստատություններում» թեմայով դասընթաց	ՀՀ տարածքում գործող ֆինանսական հաստատությունների ներքին դիտարկումների մարմնի ներկայացուցիչներ, հաճախորդներին սպասարկող աշխատակիցներ	մարտի 31-ից ապրիլի 4
ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ դասընթաց	ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ներքին դիտարկումների մարմինների ներկայացուցիչներ	սեպտեմբերի 27
«Վերլուծությունների իրականացում և հաշվետվությունների տրամադրում» թեմայով հանդիպում	ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ներքին դիտարկումների մարմինների ներկայացուցիչներ	հոկտեմբերի 15
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից կազմակերպված՝ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և ֆինանսական պատժամիջոցների վերաբերյալ վերապատրաստման սեմինար	ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ներքին դիտարկումների մարմինների ներկայացուցիչներ	նոյեմբերի 26-ից 28